

« Խալիպեան Ուսումնարանիս մէջ բռնուած դատախօսութեան կերպը եւ կառավարութեան ուղղութիւնը հաստատուած է Կայսերական բարեհաճութեամբ սահմանադրեալ կանոններուն, եւ Հայաստանեայց Լուսաւորչական եկեղեցւոյ հաւատքին եւ Վարդապետութեանը վրայ: Ուսումնարանին անմիջական Վերատեսուչն ու Տնօրէնը Գերապատիւ Գաբրիէլ Վարդապետն է, եւ նորա ձեռքն է բոլորովին ուսուցիչ դնելը, գրոց ընտրութիւնը եւ դասատուութեանց եղանակն որոշելը: Ուսումնարանին ոճը դասատուութեան կողմանէ գործնականն է, մանաւանդ լեզուագիտութեան դասերուն մէջ: Անցեալ տարւոյ սկիզբէն երկու բարձր դասարանաց մէջ սկսաւ ընագիտութեան դասախօսութիւնը ռուսերէն, եւ ընական պատմութիւնն ու հաշուետումարը գաղղիարէն. իսկ այս տարուանս մէջ կսկսի վեցերորդ դասարանին մէջ Ռուսաց օրէնսգիտութիւնը, աւելի ուշագործութիւն ընելով վաճառականութեան օրինաց:

« Այս է ահա կարճ խօսքով Խալիպեան Ուսումնարանին մինչեւ ցայժմ ցուցընել կրցած

ընդհանուր արգասիքը, զոր մեք այժմ՝ ձեր գատաստանին առջեւ կգնեմք: Իհարկէ դեռ ամէն բան եղած չէ: Այս մեծ եւ օգտակար գործոյն հարկաւոր եղած ամէն կարգաւորութիւնն ու հաստատութիւնը տալու համար՝ այլ եւս շատ աշխատանք ու Զանացողութիւն հարկաւոր է, եւ շատ բարոյական եւ նիւթական միջոցներ: Բայց գործոյն բարի սկզբնաւորութիւնն ու հաստատ հիմունքը արդէն դրուած են, եւ այժմէն կերաշխաւորեն մեզ անոր ապագայ կանոնաւոր ընթացքը:

« Մեք յոյս ունիմք որ Աստուծոյ օգնականութեամբ, մեր անչափ աշխատասիրութեամբն ու Զանքովը, եւ առատաձեռն բարերարին հոգացողութեամբը եւ խնամատարութեամբը, յոյս ունիմք՝ կըսեմ, որ Խալիպեան Ուսումնարանը պիտի բարձրանայ հասնի ուրիշ շատ երեւելի եւ օգտակար Ուսումնարանաց աստիճանին, եւ մեծ ու գոյացական օգուտ բերէ ազգին Հայոց, եւ մեր Տէրութեան՝ այսինքն Ռուսիոյ, պատրաստէ շատ մը լուսաւորեալ եւ հաւատարիմ հպատակներ:

Թարգմ. ՍՏ. ՍՈՒՐԵՆԵԱՆԵ.

Ե Ր Ա Խ Տ Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Թըփիկն անգամ անհոգի՝

Զուրց վրտակին անպրզտոր

Յորմէ սիրով ուռգի

Չեկաց երբէք ապաշնորհ:

Նովիմք գորով սաղարթուն՝

Տայ զփոխարէն գեղանի,

Կացեալ խապ արեւուն

Բարերարին հովանի:

